«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

## ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ՝** Ուսուցչի դերն ու գործառույթը դպրոցի մեթոդական միավորման աշխատանքների արդյունավետ կազմակերպման գործում

**ԱՌԱՐԿԱ՝** Անգլերեն

**ՀԵՂԻՆԱԿ՝** Լիլիթ Գևորգյան

**ՄԱՐԶ՝** Երևան

**ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝** «Շահամիր Շահամիրյան» կրթահամալիր

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**Ներածություն……3**

**Գլուխ 1. ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ….5**

**1.1 Ենթահամակարգերի դերն ու կարևորագույն գործառույթները……5**

**Գլուխ 2. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՐԸ……10**

**2.1 Մեթոդական միավորումների կառուցվածքը և վերահսկողության գործառույթները……10**

**2.2 Ուսուցչը՝ որպես մեթոդական միավորման կարևորագույն սուբյեկտ……12**

**Եզրակացություն-առաջարկություններ……15**

**Օգտագործված գրականություն……16**

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Թեմայի արդիականությունը**

Մեթոդական միավորումը, համարվելով ուսումնական հաստատության կարևորագույն և պատասխանատու ենթահամակարգ, հանդիսանում է շարժիչ ուժ ուսումնական գործընթացի կազմակերպման, պլանավորման, աշխատանքների իրագործման, արդյունքների գնահատման գործում:

Այստեղ կարևորվում է ուսուցիչներից յուրաքանչյուրի՝ որպես մեթոդական միավորման անդամնի դերն ու գործառույթը: Նրանք իրենց կատարած գործով պետք է որակապես ակտիվ և գործունյա դարձնեն այդ ենթահամակարգի գործառույթները, չէ՞ որ այն ապահովելու է տվյալ առարկայի կամ առարկաների դասավանդման որակի բարձրացման ցուցիչը:

Մեթոդական միավորման նիստերի քննարկման օրակարգում պետք է ներառվեն այնպիսի հարցեր, որոնք կհամարվեն հրատապ, օրակարգային և կդառնան, կհամարվեն առաջիկա ժամանակահատվածում առաջադրված հարցերի քննարկման ու լուծումներ առաջադրելու հարցում՝ առաջնային:

Կարևոր է նաև, որ նիստերում քննարկվող հարցերը ճիշտ բաշխված լինեն՝ ըստ ամիսների, և այդ հարցերը ոչ միայն առաջադրվի նախագահի կողմից, այլև անդամների:

Այսինքն՝ յուրաքանչյուր նիստ պետք է տարբերվի մյուսներից իր քննարկվող հարցերի անհրաժեշտությամբ ու հրատապությամբ՝ զերծ մնալով միօրինականությունից:

Մեթոդական միավորման յուրաքանչյուր անդամ՝ սկսած նախագահից, պետք է լինի իր պարտականությունների կատարողն ու անմիջական պատասխանատուն: Իսկ այս և նմանատիպ այլ աշխատանքների արդյունավետ իրագործումը կբերի ուսումնական գործընթացի կազմակերպման ցանկալի որակի:

**Հետազոտության նպատակը՝** Ներկայացնել առարկայական մեթոդական միավորման կարևորագույն դերը՝ վեր հանելով այդ ենթահամակարգում ուսուցչի կատարած

գործառույթները՝ որպես կրթության համակարգի արդյունավետության ապահովման կարևորագույն մասնակից:

**Հետազոտության խնդիրները՝**

- ✓ ներկայացնել կրթության համակարգի ենթափուլերը, նրանց կողմից իրականացվող գործառույթները,
- ✓ ցույց տալ ուսումնական գործընթացը կազմակերպելիս ուսուցչի կարևորագույն դերը՝ որպես մեթոդական միավորման անդամ,
- ✓ ներկայացնել կրթության կազմակերպիչներից՝ ուսուցանողի կատարելագործման ուղիները,
- ✓ կատարել հետազոտական արդյունքների վերլուծություն:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՀՀ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՆԹԱՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

## 1.1 Ենթահամակարգերի դերն ու կարևորագույն գործառույթները

Հանրակրթական դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով գործում են կառավարման ենթահամակարգերը:

Հանրակրթական դպրոցի կառավարման բարձրագույն մարմինը **դպրոցական խորհուրդն** է: Այն կոլեգիալ, համագործակցային մարմին է: Ըստ դպրոցի մեծության՝ խորհրդի անդամների թիվը կազմում է 7-9 հոգի: Ամբողջ կազմը հաստատվում է նախարարության կողմից: Դպրոցական խորհուրդը Հայաստանի ՀՀ կառավարության սահմանած կարգով հայտարարում և կազմակերպում է դպրոցի տնօրեն ընտրելու մրցույթ: Մրցույթի ընթացակարգին համապատասխան՝ ընտրում է դպրոցի տնօրենին՝ որպես գլխավոր գործադիր մարմին, հաստատում է ուսումնական հաստատության կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական կանոնները, հավանություն է տալիս ուսումնական հաստատության զարգացման ծրագրին, քննարկում և հավանություն է տալիս ուսումնական հաստատության հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակներին, քննարկում է ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական գործունեության հաշվետվությունները, հաստատում է իր աշխատակարգը և հաստատության կանոնադրությամբ ու խորհրդի ընտրության կարգի համաձայն՝ ընտրում է խորհրդի նախագահ:

Ամենամեծ ներդպրոցական ենթահամակարգը՝ **մանկավարժական խորհուրդը**, կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի օգոստոսյան առաջին նիստում: Խորհրդը ձևավորվում է տնօրենի հրամանով մեկ ուսումնական տարի ժամկետով: Մանկավարժական խորհրդի կազմը ձևավորվում է հետևյալ սկզբունքով. քառասուն մանկավարժներից ավելի համակազմ ունեցող հանրակրթական դպրոցի մանկավարժական խորհրդի կազմում ընդգրկվում են՝ տնօրենը, ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալները, առարկայական մեթոդական միավորումների նախագահները, դասղեկները, ծնողական խորհրդի, հոգաբարձումների

խորհրդից մեկական ներկայացուցիչներ, արհմիութենական կոմիտեի նախագահը, առարկայական մեթոդական միավորումների կողմից առաջադրված երեք-հինգ մանկավարժներ, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, ինչպես նաև այլ խորհրդակցական մարմինների ներկայացուցիչներ. մինչև քառասուն մանկավարժներից կազմված հանրակրթական դպրոցներում բոլոր մանակավարժական աշխատողները համարվում են մանկավարժական խորհրդի անդամներ: Խորհուրդը քննարկում է՝ հանրակրթական դպրոցի զարգացման ծրագիրը և երաշխավորում է այն դպրոցական խորհրդի հաստատմանը, ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ տարվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման հարցերը, հանրակրթական ուսումնական առարկաների չափորոշիչների և ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը: Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հանրակրթական դպրոցի տնօրենը, (տնօրենի պաշտոնակատարը), որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր: Մանկավարժական խորհրդի նիստերը բաց են:

Արդի ժամանակաշրջանում հանրակրթական դպրոցում իրականացվող բարեփոխումների, նորարարական մոտեցումների ներդրման, ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների կիրառման գործընթացում առաջացած խնդիրների լուծման գործում զգալիորեն մեծանում է **առարկայական մեթոդական միավորումների** դերը (այս ենթահամակարգի գործառույթները կներկայացնենք հաջորդ գլխում):

Դասարանների **ծնողական խորհուրդները**՝ նախագահ և երկուսից չորս անդամի կազմով, ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ ուսումնական տարվա համար: Հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից: Ծնողական խորհրդի նախագահը ընտրվում է փակ քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Ծնողական դասարանական խորհուրդների նիստերին մասնակցում են դասղեկները, իսկ դպրոցականին՝ տնօրենը: Համադպրոցական հարցերի քննարկման համար ծնողական խորհուրդը հրավիրում է ընդհանուր ժողովներ: Ուսումնական տարվա ընթացքում, համաձայն հանրակրթական դպրոցի ուսումնադաստիարակչական պլանի, հրավիրվում են դասարանականը՝ ոչ պակաս, քան չորս անգամ, համադպրոցականը՝ երկու անգամ: Հանրակրթական դպրոցի ծնողական խորհուրդը. հանրակրթական դպրոցի Խորհրդի

ձևավորման կարգի պահանջներին համապատասխան, իր կազմից առաջադրում է Խորհրդի անդամության թեկնածուներ: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայն հավաքած երկու թեկնածուները, հանրակրթական դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնում է սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքների բարելավման, մանկավարժների խրախուսման վերաբերյալ առաջարկություններ, աջակցում է հանրակրթական դպրոցին դժվար դաստիարակվող սովորողների դաստիարակության, սոցիալական աջակցության կազմակերպմանը, հանրակրթական դպրոցի և ծնողների միջև ամրապնդում է կապերը, ներգրավում է ծնողներին սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում, աջակցում է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

Հաստատության աշակերտական ինքնավարության բարձրագույն մարմինը հանրակրթական դպրոցի բարձր դասարանների (6-ից 12-րդ դասարաններ) **աշակերտների ընդհանուր ժողովն** է, որի նիստերին կարող են մասնակցել նաև ցածր դասարանների աշակերտները: Նոր ուսումնական տարվա առաջին աշակերտական ընդհանուր ժողովը (համաժողովը) հրավիրվում է հաստատության տնօրենի կողմից՝ սեպտեմբեր ամսվա առաջին շաբաթվա ընթացքում: Աշակերտական ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան առնվազն երկու անգամ աշակերտական խորհրդի նախագահի կողմից: Աշակերտները կարող են ստեղծել նաև ըստ հետաքրքրությունների՝ ակումբներ, միավորումներ, որոնք հանդիսանում են աշակերտական ինքնավարության զարգացմանը նպաստող օղակներ:

Աշակերտական ընդհանուր ժողովը հանրակրթական դպրոցի սեպտեմբերյան ժողովում ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ **աշակերտական խորհուրդ**, որը ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան հաստատության գործունեության կազմակերպմանը նպաստելու, անմիջականորեն իրենց վերաբերող հարցերի մասին սովորողների կարծիքի ազատ արտահայտումն ապահովելու և սովորողների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ հաստատության կանոնադրության դրույթների պահպանումը վերահսկելու նպատակով: Աշակերտական խորհուրդը սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմին է, որի գործունեության հիմնական սկզբունքներն են՝ կամավորությունը, սովորողների

իրավահավասարությունը, կառավարման կոլեգիալությունը և հրապարակայնությունը: Աշակերտական ինքնավարության մարմինների, դասարանական ժողովի, գործադիր մարմնի՝ աշակերտական խորհրդի, ինչպես նաև նրա ղեկավարության ձևավորման կարգը, լիազորությունները սահմանվում են հանրակրթական դպրոցի կանոնադրությամբ և նախարարության կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության հանրակրթական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշակերտական խորհրդի օրինակելի կանոնադրությամբ:

Աշակերտական խորհրրդի ներկայացուցիչը, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում է խորհրդի և մանկավարժական խորհրդի այն նիստերին (կամ հարցերի քննարկմանը), որտեղ քննարկվում են աշակերտներին անմիջականորեն վերաբերող հարցեր:




**Գծանկար 1. Կրթության ենթահամակարգեր**

Ընդհանրապես յուրաքանչյուր ենթահամակարգի աշխատանք պետք է բխի մյուս ենթահամակարգերի փոխհամակցված աշխատանքից:

Այսպիսով, բոլոր ենթահամակարգերի միջև պարտադիր է փոխհամաձայնեցված աշխատանքը, հակառակ պարագայում աշխատանքում պարզապես որակ չի ապահովի:

# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
# ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԴԵՐԸ

## 2.1 Մեթոդական միավորումների կառուցվածքը և վերահսկողության գործառույթները

Առարկայական մեթոդական միավորումները հանդես են գալիս որպես ներդպրոցական վերահսկողության իրականացման և հատկապես կատարելագործման կոլեկտիվ կառույցներ:

Առարկայական մեթոդական միավորումները ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ հարակից առարկաների ուսուցիչներից:

Առարկայական մեթոդական միավորումը քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, մեթոդական ձեռնարկները, և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություններ, ուսումնասիրում, նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը, իսկ որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին նախապատրաստում է ատեստավորման, կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական, խորհրդակցություններ, խորհրդատվություններ, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ, մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման մասին, կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում հանրակրթական դպրոցի տնօրենին, կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ :

Տարբեր հանրակրթական դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

**Գծանկար 2. Մեթոդական միավորման նախագահի պարտավորությունները**

Մեթոդական միավորումների նիստերը գումարվում են ամիսը առնվազն մեկ անգամ: Ըստ անհարժեշտության՝ կարող են գումարվել նաև արտահերթ նիստեր: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են մեթոդական միավորման քարտուղարի կողմից:

## 2.2 Ուսուցչը՝ որպես մեթոդական միավորման կարևորագույն սուբյեկտ

Հանրակրթության բարեփոխման և ներդպրոցական վերհասկողության կատարելագործումը հրամայական պահանջ են դնում առարկայական մեթոդական միավորումների առաջ՝ նորացնել աշխատանքի բովանդակությունը, աշխատանքի ոճը, մեթոդական գործիքակազմը:

Առարկայական մեթոդական միավորումները՝ որպես ներդպրոցական վերահսկողության իրականացման գիտամեթոդական միավորում, պետք է հանրակրթության բարեփոխումներն արդի փուլում իրականացնի հետևյալ միջոցառումներով և համապատասխան գործառույթներով.




**Գծանկար 3. Ուսուցչի գործառույթներն իր դասավանդած առարկայի վերաբերյալ**

Ուսուցիչը՝ որպես մեթոդական միավորման կարևորագույն դերակատար, պետք է իր ակտիվ գործունեությունն ունենա տվյալ ուսումնական տարվա ուսումնական գործընթացը կազմակերպելիս: Այսինքն՝ արդի ժամանակաշրջանը նոր պահանջներ է դնում ուսուցիչների առջև:

Դրանցից է **ցուցադրական դասերի** կազմակերպումն ու վարումը: Դա արվում է երկու նպատակով.

- ✓ ցուցադրել մանկավարժական վարպետություն ունեցող ուսուցիչների, նրանց կողմից ուսուցման ու դաստիարակության մեջ կիրառվող մեթոդները, միջոցներն ու ձևերը,
- ✓ աջակցել երիտասարդ, սկսնակ, օգնության կարիք ունեցող ուսուցիչներին:

Ցանկալի և արդյունավետ է, որպեսզի մեթոդական միավորման օգոստոսյան նիստի ժամանակ քննարկվի տվյալ ուստարվա ընթացքում անդամ-ուսուցիչների կազմակերպվող **բաց դասերի** քանակն ու տեսակը:

Կարևոր է, որ ուսուցիչը, ինչպես բոլոր դասերը, այնպես էլ բաց դասը նախապես պլանավորի, այսինքն՝ սահմանի տվյալ դասի նպատակը, մշակի այն խնդիրները, որոնք կբխեն նպատակից, առաջ քաշի տվյալ դասի համար իրատեսական վերջնարդյունքներ:

Սակայն աներկբա սխալ է, երբ ուսուցիչը բաց դասը նախապես ներկայացնում է սովորողներին, կատարում փորձեր, նախապես սովորեցնում է օրվա դասի թեման, առաջ ընկնելով՝ պարտադրում է գրել հանձնարարվող առաջադրանքները:

Դա միանշանակ կհամարվի կեղծ, շինծու դաս: Սովորաբար նման դասերին սովորողները ոչ մի հետաքրքրություն չեն ցուցաբերում, քանի որ իրենց համար լիովին պարզ է դասի ողջ քայլաշարը:

Ահա այս և նմանատիպ խնդիրներից խույս տալու համար, մեթոդական միավորումում պետք է քննարկվեն նմանատիպ հարցերը:

Լավ ու շահեկան կլինի, որպեսզի այդ դասերն ունկնդրվեն մանկավարժական այնպիսի հիմնախնդիրների լուծման համար, ինչպիսիք են.

- ✓ պրոբլեմային ուսուցում
- ✓ տարամակարդակ ուսուցում
- ✓ աշակերտակենտրոն ուսուցում
- ✓ մանակավարժական և աշակերտական դասանպատակներ
- ✓ սովորողների գիտելիքի, կարողությունների, հմտությունների, արժեքային համակարգի, դիրքորոշման սկզբմունքներն ու չափանիշները:

Շատ կարևոր է մեթոդական միավորման նիստերի քննարկումների ընթացքում շեշտադրվի ուսուցիչների ինքնարկրթության հարցը:

Շարունակելով որակական բարձրացում մանակավարժական հատուկ մասնագիտական հաստատություններում և բարձարգույն ուսումնական հաստատություններում, պետք է նախապատվությունը տալ մասնագիտական և

առարկայական գիտելիքները, մանակավարժական կարողությունները և հմտությունները ինքնուրույն բարձրացնելու հարցին: Դրա արդյունավետությունը կարող է տանել մի քանի ուղիներ, որոնցից կարևորները կարելի է համարել

- ✓ ուսումնական նոր ծրագրերի ու դասագրքերի ուսումնասիրությունները, դրանց պահանջների ու առանձնահատկությունների յուրացումը,
- ✓ դասագրքերի և նոր ուսումնական ձեռնարկների պահանջների նկատմամբ սեփական ուժերի գիտակացումը, իմաստավորումը և գնահատումը, մտավոր ուժերի դինամիկ զարգացումը,
- ✓ ուսումնական և դաստիարակչական խնդիրների ինքնուրույնաբար, նոր տեխնոլոգիաների օգնությամբ լուծումը, նորերի առաջադրումը:

Սակայն առավել կարևորն ու օգտակարը իր նախասիրությանը հատուկ լուրջ գիտական հետազոտությամբ զբաղվելն է, որը նրան կօգնի հարստացնել մանկավարժական վարպետության բովանդակությունը, այդ բնագավառում ձեռք բերելով՝

- ✓ մասնագիտական գիտելիքներ,
- ✓ մասնագիտական կարողություններ, հմտություններ,
- ✓ մասնագիտական փորձ,
- ✓ անձնական նվիրում:

Իսկ դա կօգնի ոչ միայն ուսուցչի մանկավարժական անհատական գործունեությանը, առարկայական մեթոդ միավորման աշխատանքներին, այլև ներդպրոցական վերահսկողության սուբյեկտների գործնական փոխհարաբերության հաստատմանը:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ-ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հետազոտական աշխատանքը կատարելիս ուսումնասիրել եմ տարբեր դպրոցների մեթոդական միավորումների կողմից իրականացվող գործառույթները, այդ թվում՝ նիստերի արձանգրությունների մատյաններն ու ձևաթղթերը (ուսումնասիրածս դպրոցներում արձանագրություններ գրելու ձևաչափը տարբեր էր), անցկացրել եմ զրույցներ ոչ միայն լեզուների, այլև բնագիտամաթեմատիկական մեթոդական միավորման նախագահների և քարտուղարների հետ:

Զրույց-քննարկումների ընթացքում ներկայացվել է ոչ միայն արդյունավետ աշխատանք կազմակերպելու առավելությունները, այլև քննարկել ենք այնպիսի խնդիրներ, որոնց առակայությունը կարող է խոչընդոտել այս ենթահամակարգի կողմից իրականացված աշխատանքի արդյունավետ ընթացքը:

Մեթոդական միավորումը, համարվելով ուսումնական հաստատության պատասխանատու ենթահամակարգ, ուսուցիչն էլ՝ որպես այդ ենթահամակարգի կարևորագույն մասնակից, կարևորագույն ու պատասխանատու դերակատարում ունեն ուսումնական գործընթացի կազմակերպման, որակի ապահովման գործում:

Ըստ այդմ՝ առաջարկում ենք՝

- ✓ Նիստերում քննարկվող հարցերն առաջադրվեն ոչ միայն տարեկան պլանին համապատասխան, այլև քննարկվեն այնպիսի հարցեր, որոնք հրատապ են և ձեռք են բերել առաջնայնություն:
- ✓ Չխուսափել արտահերթ նիստեր գումարելոուց, եթե ի հայտ են եկել նոր հարցեր ու խնդիրներ:
- ✓ ՈՒսուցիչը՝ որպես մեթոդական միավորման անդամ, չպետք է նիստին մասնակցի խորհրդակցական ձայնի իրավունքով, այլ լինի ակտիվ, քննարկվող հարցի կամ հարցերի շուրջ կարողանա ներկայացնել սեփական տեսակետն ու առաջարկությունները:
- ✓ Տվյալ մեթոդական միավորման ուսուցիչները պետք է ակտիվություն ցուցաբերեն մասնակցելու հասարակական, կրթա-ուսումնական գործունեության կազմակերպմանն ու քննարկումներին: Լինեն մասնակիցը առաջարկող դասընթացներին ու վերապատրաստումներին:

- ✓ Եվ ամենակարևորը, յուրաքանչյուր ուսուցիչ՝ անկախ մասնագիտական կարողությունների չափից ու որակից, պետք է նպաստի իր ինքնակրթության կատարելագործմանը, չէ՞ որ ժամանակն առաջ է ընթանում աննախադեպ արագությամբ՝ ինչպես մյուս բնագավառներում, այնպես էլ կրթության ոլորտում առաջ քաշելով պահանջների նոր ձևաչափ ու որակ:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի Օրինակելի Կանոնադրություն, 2017թ., 2002թ.,

2. Առաքելյան Մ. Առարկայական մեթոդական միավորումների գործունեության հիմնական ուղղությունները արդի պայմաններում, Մանկավարժական միտք ամսագիր, Տաթև Գիտակրթական համալիր, Երևան 2015թ. N 3,

3. Պապիկյան Կ. «Դպրոցի մանկավարժական խորհրդի, առարկայական մեթոդ-միավորումների, ծնողական կոմիտեի ներդպրոցական վերահսկողության գործառույթներ»